



**ՀԱՎԱՏԱՐԻՄ**

**ՀՈՂԻՆ ՈՒ**



**3**

**ՀԱՅԻՆ**

**Հ. Յ. ԴԱՇՆԱԿՅՈՒԹՅՈՒՆ**



**ՀԱՎԱՏԱՐԻՄ**  
**ՀՈՂԻՆ ՈՒ** **3**  
**ՀԱՅԻՆ**

**Հ. Յ. Դ Ա Շ Ն Ա Կ Յ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

ՀՀԴ կազակերպական  
շրջանների գորակցական  
հայտարարությունները  
2018 թ.

ՀՀ ԱԺ արտահերթ  
ընտրությունների ժամանակ



Հ. Յ. ԴԱՇՆԱԿՅՈՒԹՅՈՒՆ

## ՀՀԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտե

ՀՀ Ազգային ժողովի յառաջիկայ պատգամաւորական ընտրութիւններու նախաշեմին կը գտնուին հայրենի մեր ժողովուրդն ու քաղաքական դաշտին մէջ գործող ուժերը: Դեկտեմբեր 9-ին կայանալիք այս ընտրութիւններուն մասնակցելու իր որոշումը հրապարակած է նաեւ Հոկտեմբերի 19-21 գումարուած ՀՀԴ Հայաստանի 22-րդ Արտահերթ Գերագոյն ժողովը:

Այս առթիւ հրատարակած իր յայտարարութեան մէջ, ՀՀԴ Հայաստանի Գերագոյն ժողովը կը նշէ թէ՛ «քննելով ներքաղաքական վիճակը, առկայ մարտահրաւերներն ու հնարաւոր զարգացումները», առաւել եւս՝ «կարելորելով քաղաքական ուժերի միջեւ գաղափարական, ծրագրային հենքի վրայ փոխադարձ յարգանքի հանդուրժողականութեան մթնոլորտում քաղաքական պայքարը», այս ընտրութիւններուն իր մասնակցութեան որոշման համար կ'արձանագրէ՝ «իր հաւատարմութիւնը ազգային ուղեգծին, Արցախի Հանրապետութեան եւ արցախահայութեան իրաւունքների ամբողջական պաշտպանութեան, երկրում սոցիալական ու տնտեսական արդարութեան հաստատման համար պայքարին»:

Ներկայ յայտարարութեամբ, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Գանատայի ողջ կազմին անունով՝ մեր ամբողջական զօրակցութիւնը կը յայտնենք ՀՀԴ Հայաստանի մեր կազմակերպութեան ընտրութեանց մասնակցելու այս որոշման ու անկէ մեկնելիք ընտրական բոլոր աշխատանքներուն: Կը վերահաստատենք, որ մենք ազգային գաղափարախօսութիւն դաւանող մէկ ու միասնական քաղաքական կուսակցակութիւն ենք: Կը հաւատանք, որ մեր ընկերներու հաւաքական ճիգն ու սկզբունքայնութիւնը՝ իրենց բնորոշ ներդրումն ու դրոշմը պիտի ունենան հանրապետութեան համար՝ նոր հանգրուանի մը թելակոխման մէջ: Համոզուած ենք նաեւ, թէ այս հանգրուանի սկզբնակէտէն իսկ՝ հայրենի մեր շարքերը պիտի շարունակեն հայոց պետականութեան հիմերու ամրակայման իրենց գործը, որ կը յատկանշուի ՀՀԴ արժեհամակարգին համահունչ՝ հայրենի մեր ժողովուրդին համար առաւել ժողովրդավար ու արդար՝ ընկերային կեանքի մը ամրապնդումով, ՀՀ Սահմանդրութեան գերակայութեան եւ անկէ բխած օրէնքներու լիարժէք կենսագործմամբ, ու վերջապէս՝ մեր հայրենիքի հզօրացման ու յառաջընթացին անշրջելի գործընթացով:



**Հ. Յ. Դ Ա Շ Ն Ա Կ Յ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

## **ՀՀԴ Արեւմտեան Եւրոպայի Կեդրոնական Կոմիտէ**

**Յառաջիկայ 9 դեկտեմբերին, հայրենի մեր ժողովուրդը պիտի ուղղուի քուէատուկ՝ խորհրդարանական արտահերթ ընտրութիւններու մասնակցելու:**

**Քաղաքական այլ ուժերու կողքին, Դաշնակցութիւնը եւս կը լծուի այս ընտրապայքարին, ինքնուրոյն, առանձին ցանկով, առանց որեւէ դաշինքի:**

**Սոյն ընտրութիւնը առաջինն է՝ Հայաստանի մէջ խորհրդարանական համակարգի հաստատումէն ետք: Առ այդ, մեր երկիրը կը թեւակոխէ նոր հանգրուան, այն պահուն, երբ կը շարունակեն մեր դիմաց ծառանալ ազգային մեր անվտանգութեան առնչուող հարցեր ու թղթածրարներ, որոնց բարուք լուծում ապահովելու կոչուած է գալիք Ազգային ժողովը: Բոլորին կողմէ իրաւամբ ակնկալուող տարբեր բարեկարգումներու , արդար, բարօր, առաւել զարգացող երկիր կառուցելու զուգահեռ, լուծելի եւ դիմակայելի էական կէտերը, սակայն, կը մնան երկրի ընկերային-տնտեսական բարդ իրավիճակը, արցախեան հիմնախնդրի բարենպաստ կարգաւորումը, Անգարայի կողմէ յամառօրէն պահուող շրջափակումը, Պաքուի հակահայ ակրեսիւ քաղաքականութիւնը, եւ մասամբ նորին:**

**Ահա այս բոլորին մէջ՝ ամենայն գիտակցութեամբ, անսակարկ նուիրուածութեամբ, բժախնդրութեամբ, անշահախնդրութեամբ, ազգին ու հայրենիքին ծառայելու երդուածութեամբ պատասխանատուութիւն վերցնելու պատրաստակամութիւնն ունին ՀՀԴ-ի ընտրացանկի մեր թեկնածուները, որոնք պետականաշինութեան գործընթացի վերոյիշեալ հարցերուն կողքին իբրեւ Դաշնակցութեան ներկայացուցիչներ ունին նաեւ գաղափարական պատկանելիութեամբ իրենց յատուկ պարտաւորութիւններ՝ Հայ Դատի օրակարգով, այլ խօսքով՝ համահայկական մասշտապով, համազգային տարողութեամբ:**

**Եւ մենք՝ Արեւմտեան Եւրոպայի դաշնակցական ամբողջ ընտանիքը, մեր անվերապահ վստահութիւնն ու զօրակցութիւնը կը յայտնենք, բանիւ եւ գործով, ու բարի երթ կը մաղթենք մեր ընկերներուն: Այո՛, Հայաստանի կազմակերպութեան սիրելի ընկերներ, հաւատարիմ՝ հողին ու հային: Ամբողջական հողին – միացեալ հայրենիքին, ամբողջական հային – միացեալ հայութեան:**



**Հ. Յ. ԴԱՇՆԱԿՅՈՒԹՅՈՒՆ**

## **ՀՀԴ Կիպրոսի Կոմիտե**

Դեկտեմբեր 9-ին Հայաստանի մէջ տեղի պիտի ունենան արտակարգ խորհրդարանական ընտրութիւններ, որու պիտի մասնակցի Հայաստանի մեր կառոյցը, հաւատարիմ ՀՀԴ-ի մէկ եւ քառորդ դարէ աւելի ունեցած առաքելութեան՝ հաւատարիմ հողին ու հային կարգախօսով:

Վերջերս, երկրին մէջ տիրող անկայուն ու անորոշ ներքին իրավիճակը, սկսած տնտեսական յստակ տեսլականի բացակայութենէն, ապագային երեւոյթներու թափանցումներէն, հասնելով մինչեւ արտաքին քաղաքականութեան մէջ տեսանելի ճեղքերուն, որոնք լրջօրէն կը սպառնան մեր հայրենիքի անվտանգութեան ու հարցականի տակ կը դնեն անոր ապագայ երթն ու լինելիութիւնը, առաւել եւս կը պարտաւորեցնեն ու անհարժեշտ կը դարձնեն մի՛ակ համասփիւռքեան տարողութիւն ունեցող, յստակ ու անփոփոխ ծրագիր ներկայացնող եւ ընկերվարական իր սկզբունքներուն ամուր կառչած՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ընդգրկուն ներկայութիւնը խորհրդարանէն ներս:

Այս ընտրութիւնները, որոնք կը զուգադիպին Հայաստանի Ա. Հանրապետութեան 100-ամեակին, անկանխատեսելի են ու ճգնաժամային: Այս ընտրութիւններէն շատ բան կախեալ է եւ զայն պէտք է համարել մայիսեան իշխանափոխութենէն ետք ամենակարեւոր իրադարձութիւնը, որու արդիւնքը մեր երկրին համար ճակատագրական ու վճռորոշ կրնայ ըլլալ:

Առ այդ, ՀՀԴ Կիպրոսի Առանձնակի կոմիտեութիւնը իր բոլոր ընկերներով ու համակիրներով, անսակարկ զօրակցութիւն ու անվերապահ աջակցութիւն կը յայտնէ Մայր հայրենիքին մէջ գործող մեր կառոյցին եւ առաջադրուած թեկնածուներուն, յաջողութիւն մաղթելով յանուն հայրենիքին ու հայութեան ծառայելու կոչուած Հ. Յ. Դաշնակցութեան:



**Հ. Յ. Դ Ա Շ Ն Ա Կ Յ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

## **ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական Կոմիտե**


**Դեմ յանդիման կը գտնուինք մեր երկրի ու ժողովուրդի պատմութեան նորագոյն հանգրուանը ուղենշող Ազգային ժողովի արտահերթ ընտրութիւններուն, որոնք առաջինն են Հայաստանի մէջ խորհրդարանական վարչակարգի հաստատումէն ետք:**

**ՀՀԴ Հայաստանի Գերագոյն Մարմինը, պատմական պահու պատասխանատուութեան գիտակից, ընտրութիւններուն կը մասնակցի ամբողջ ներուժով, հակառակ ընտրութիւններու թուականին եւ նախընտրական մթնոլորտին կապուած իր լուրջ վերապահութիւններուն:**

**Իբրեւ քաղաքական ինքնուրոյն ուժ, Դաշնակցութիւնը ընտրութիւններուն կը մասնակցի առանձին, գլխաւոր զրահ ունենալով նախընտրական իր ծրագիրը, որ խարսխուած է բարոյականութեան եւ արդարութեան սկզբունքներու վրայ, ազգային արժէքներու պահպանման եւ ընկերային արդարութեան պաշտպանութեան նախանձախնդրութեամբ:**

**Արդարեւ, Դաշնակցութիւնը կը հաւատայ, որ Մայիսեան ժողովրդային շարժումը շատ բան փոխած է մեր կեանքին մէջ: Անցեալի էջը փակուած է ընդմիջտ եւ մեր ժողովուրդը, Սփիւռք թէ Հայաստան, յուսալից է, որ գալիք Ազգային ժողովը նոր մղում պիտի տայ Հայաստանի ժողովրդավարականացման ընթացքին, փտածութեան եւ մենաշնորհներու դէմ պայքարին, օրէնքի եւ արդարութեան պետութեան հաստատման, ինչպէս նաեւ՝ հայրենիք-Սփիւռք կապերու յաւելեալ սերտացման:**


**Իբրեւ ազգային, ժողովրդավար, ընկերվարական եւ յեղափոխական կուսակցութիւն, Դաշնակցութիւնը վաղուան Հայաստանի իր պատկերացումները եւ զանոնք իրականացնելու միջոցները բանաձեւած է նախընտրական իր ծրագիրով, որ յստակ, գործնական ու տրամաբանական առաջարկներով կը ճշդէ արդիւնաւէտ եւ լայնածիր բարեփոխումներով հզօր եւ արդար հայրենիք ունենալու, Արցախը ապահով ու բարգաւաճ տեսնելու համազգային պահանջը, որուն կենսագործման առաջին քայլերը կը սկսին այս ընտրութիւններուն մեր ժողովուրդին մեծաթիւ մասնակցութեամբ եւ կուսակցութեան թեկնածուներուն անվերապահ աջակցութեամբ:**



**Դաշնակցությունը կը հաւատայ, որ 9 Դեկտեմբերի ընտրութիւնները պիտի հունաւորեն մեր երկրի զարգացման ապագան եւ Արցախի հարցին լուծման ճակատագիրը, որ է եւ կը մնայ անբաժանելի մէկ մասնիկը Հայկական Հարցին եւ Հայ Դատին:**

**Առ այդ, նկատի ունենալով արտահերթ այս ընտրութիւններուն կենսական նշանակութիւնն ու կարեւորութիւնը, ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական Կոմիտեն իր ամբողջական զօրակցութիւնը կը յայտնէ ՀՅԴ Հայաստանի Գերագոյն Մարմինի աշխատանքներուն եւ իր կարողութիւններն ու կարելիութիւնները ի սպաս կը դնէ հայրենի մեր կազմակերպութեան ընտրական աշխատանքներուն յաջողութեան:**

**Միաժամանակ, Կեդրոնական Կոմիտեն կոչ կ'ուղղէ հայրենի հայութեան ընդհանրապէս եւ Հայաստան հաստատուած լիբանանահայերուն յատկապէս, 9 Դեկտեմբերին անվերապահօրէն մասնակցելու Ազգային Ժողովի ընտրութիւններուն եւ քուէարկելու «հողին ու հային» հաւատարիմ կուսակցութեան՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, ի խնդիր ազատ մարդու, պատասխանատու պետութեան եւ հզօր հայրենիքի կերտման մեծ տեսլականին իրականացման:**





Հ.Յ.ԴԱՇՆԱԿՅՈՒԹՅՈՒՆ

## ՀՀԴ Շուկտի Կոմիտե

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Շուկտիոյ Կոմիտեութեան՝ ընկերները, ընկերուհիները, քոյր Սիութիւններ Հ.Մ.Ը.Մ., Հ.Օ.Մ., Հ.Ե.Մ., Համազգայինը, Հայ Դատի Յանձնախումբը եւ համակիրները իրենց անսակարկ զօրակցութիւնը ու աջակցութիւնը կը յայտնեն մայր հայրենիքի մէջ գործող մեր կառոյցին եւ առաջադրուած թեկնածուներուն յաջողութիւն մաղթելով յանուն հայրենիքի բարգաւաճման ծառայելուկոչուած Հայ Յեղափոխական Դաշնակցութեան թեկնածուներուն:

Օն ուրեմն յառաջ հայրենակիցներ քուէարկեցէք թիւ 3 ընտրաշարքին:





Հ. Յ. ԴԱՇՆԱԿՅՈՒԹՅՈՒՆ

## ՀՀԴ Հարաւային Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէ

Մեր ժողովուրդը կը գտնուի կարելոր հանգրուանի մը առջեւ:

9 Դեկտեմբերին տեղի պիտի ունենան ՀՀ խորհրդարանական արտահերթ ընտրութիւնները, որուն Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը կը մասնակցի փորձառու եւ պատրաստուած թեկնածուներով, իրականացնելու համար այն ծրագիրները, որոնք վստահաբար պիտի ամրապնդեն մեր պետութիւնը եւ Արցախի գոյամարտի ձեռքբերումները:

ՀՀԴ Հայաստանի կազմակերպութեան ծրագիրները ուղղուած են նաեւ սոցիալական հիմնախնդիրներու լուծման, տնտեսութեան զարգացման եւ ՓՄՁ՝ներու (փոքր եւ միջին ձեռնարկութիւններ) կայացման, համոզուած ըլլալով թէ այս ճամբաները կը ստեղծեն յստակ միջավայր աղքատութեան դէմ պայքարելու, տնտեսական աճ ապահովելու, ընկերային արդարութիւն հաստատելու եւ ժողովուրդի բարեկեցութեան մակարդակը բարձրացնելու համար:

Վստահ ենք նաեւ թէ ժողովրդավարութեան զարգացումը եւ Հայաստանի անվտանգութեան ամրապնդումը էական սիւներ են պետութեան գոյատեւման ու հզօրացման համար: Որպէսզի սկսուած ժողովրդական շարժումը իսկապէս յաջողի եւ ժողովուրդի շարունակական վստահութիւնը ապահովուի, անհրաժեշտ է քաղաքական հետեւողական ծրագիր, որու հիմքերը ՀՀԴ՝ն յստակօրէն կը ներկայացնէ այս ընտրարշաւին ընթացքին:

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը մէկ ու անբաժան համահայկական կազմակերպութիւն է Հայաստանի ու հայութեան բարօրութեան համար ամենուրեք աշխատող: Այս տեսլականին հաւատարիմ՝ ՀՀԴ Հարաւային Ամերիկայի ընտանիքին անունով մեր զօրակցութիւնը եւ յաջողութեան մաղթանքները կը յայտնենք Հայաստանի մեր կառոյցին եւ ընկերներուն խորհրդարանական արտահերթ ընտրարշաւին առթիւ, վստահ ըլլալով թէ մեր համահայկական ձգտումներն ու ազգային արժէքները իրենց միջոցաւ պիտի շարունակուին հնչել ՀՀ Ազգային ժողովէն ներս:



Հ. Յ. ԴԱՇՆԱԿՅՈՒԹՅՈՒՆ

## ՀՀԴ Արցախի Կենտրոնական Կոմիտե

Սիրելի՛ հայրենակիցներ,

ՀՀ-ում Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների քարոզարշավի այս օրերին, ականատեսն ենք որոշ թեկնածուների, քաղաքական ուժերի կողմից Արցախին լեզվակռվի մեջ ներքաշելու, Արցախյան շարժումն ու ազատամարտը արժեզրկելու ճիգերին: Սա կատարվում է նախորդող ամիսներին, որոշ շրջանակների կողմից ազգային արժեքներ, մասնավորապես Հայ առաքելական եկեղեցին եւ ավանդական հայկական ընտանիքը թիրախավորելու խորապատկերին: Թվում է, թե այս բոլորը մաս են կազմում մի ընդհանուր քաղաքականության, որի նպատակն է հարվածել մեր ազգային արժեքներին:

Արցախյան շարժումը եւ ազատամարտի հաղթական ընթացքը հանդիսանում են հայոց պետականության հիմնաքարերը, վերջին երեսուն տարիների հայության ազգային ձեռքբերումների մեկնակետն ու արդյունքը, մեր ներկայի հնարավորությունների ու ապագայի նոր ձեռքբերումների երաշխավորները: Այդ ամենը ձեռք է բերվել հազարավոր մարդկանց արյան ու զրկանքների գնով: Վտանգել, հարցականի տակ դնել այդ ամենը նշանակում է հրաժարվել բազում սերունդների ազգային պետություն ունենալու տեսլականից: Պետականությունը, դրան ծնունդ տվող ժողովուրդը և այդ ամենից բխող արժեհամակարգը բացարձակ արժեքներ են, իսկ քաղաքական պահական հաշվարկներն ու դրանցից բխող իրավիճակային քայլերը միշտ էլ կտարալուծվեն պատմության հարահոսում:

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական կոմիտեն դատապարտում է նմանօրինակ քայլերը և հորդորում՝ հեռու մնալ պատեհապաշտական մոտեցումներից: Ակնկալում ենք այս օրերին ՀՀ-ում ընթացող քաղաքական գործընթացների մասնակիցներից պատասխանատվության գիտակցում և պետականամետ մոտեցում: Միաժամանակ կոչ ենք անում հայկական բոլոր քաղաքական ուժերին, հանրության լայն շերտերին համախմբվել վերը հիշված բացարձակ արժեքների շուրջ եւ անսասան պահել Արցախյան շարժման ձեռքբերումները, կուռ պահելով Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնությունը: Այդ ամենի միջոցով մենք կհաղթահարենք ապագայում տեսանելի և անտեսանելի բոլոր տեսակի մարտահրավերները:

Միշտ հավատարիմ՝ հողին ու հային:



**Հ. Յ. Դ Ա Շ Ն Ա Կ Յ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

## **ՀՀԴ Սուրիոյ Կեդրոնական Կոմիտէ**

9 Դեկտեմբեր 2018ին, տեղի պիտի ունենան ՀՀ խորհրդարանական արտահերթ ընտրութիւնները, ընտրութիւններ որոնք մեր հայրենիքը դէմ յանդիման կը դնեն պատմականօրէն վճռորոշ իրադարձութիւններու դիմաց: Խնդրոյ առարկայ են՝ Արցախի օրինական կարգավիճակն ու ապահովութիւնը, Հայաստանի ու հայութեան անվտանգութիւնը, հայրենիքին մէջ ընկերային արդարութեան հաստատման ու տնտեսական բարօրութեան եւ Հայաստանի ժողովուրդի բարեկեցութեան խնդիրները:

Մենք մեկնելով ՀՀԴ Հայաստանի կազմակերպութեան կողմէ կատարուած գնահատականներէն ու հարցերու լուծման համար ներկայացուած ծրագիրներէն, եւ համոզուած ըլլալով, որ ՀՀԴ կը մնայ ու կը գործէ որպէս արթուն պահակը մեր ժողովուրդին ու հայրենիքին, այսօր մասնակցելով ՀՀ խորհրդարանական արտահերթ ընտրութիւններուն՝ ՀՀԴ Հայաստանի կազմակերպութիւնը կը հաստատէ թէ իրեն վստահուած առաքելութեան տերն է ու անոր դրօշակակիրը:

Մենք յայտարարելով մեր զօրակցութիւնը ՀՀԴ Հայաստանի կազմակերպութեան եւ անոր կողմէ առաջադրուած ՀՀ խորհրդարանական ընտրութիւններու թեկնածուներուն, կը հաստատենք թէ՝ ՀՀԴ-ն մէկ է ե՛լ հայրենիքի, ե՛լ սփիւռքի մէջ:

ՀՀԴ-ն այդպէս էր նաեւ երբ սուրիական տագնապը կը վտանգէր մեր ժողովուրդի գոյութիւնը: Սուրիահայերը առանձին չէին, որովհետեւ ՀՀԴ-ն իր համահայկական կառոյցներով, ամբողջական կարողութեամբ ու ՀՀԴ Հայաստանի կազմակերպութեան անսակարկ մասնակցութեամբ թեւ ու թիկունք էր սուրիահայութեան:

Արդ, կոչ կ'ուղղենք հայրենաբնակ սուրիահայերուն խիտ շարքերով մասնակցելու ՀՀ խորհրդարանական արտահերթ ընտրութիւններուն եւ քուէարկելով ՀՀԴ-ի օգտին կատարելու իրենց պարտականութիւնը «Հայուն ու Հողին» հանդէպ:



**Հ. Յ. Դ Ա Շ Ն Ա Կ Յ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

## **ՀՀԴ Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէ**


**Կիրակի, 9 Դեկտեմբերին, Հայաստանի քաղաքացիները պիտի ուղղուին դէպի քուէատուփ՝ ընտրելու համար նոր խորհրդարան: Ասիկա առաջին համապետական ընտրութիւնը պիտի հանդիսանայ գարնան մեկնարկած ժողովրդային շարժումէն ետք, որ տապալեց նախկին վարչակարգը եւ ճանապարհ բացաւ Հայաստանի մէջ նոր ժամանակաշրջանի մը, ուր ժողովուրդը տէր կը դառնայ իր սեփական ճակատագիրին:**

**Ժողովրդավարութեան սիւներէն մէկը արդար ընտրութիւններն են, երբ քաղաքացիները ազատ են իրենց խիղճի ծայնին անսալով քուէարկելու: Դժբախտաբար, անցեալ տասնամեակներուն յաջորդական կառավարութիւնները, պահպանելու համար իրենց փտած վարչակարգը, իրենց լծակները գործի դնելով՝ ճնշած ու զրկած են քաղաքացիները ազատ ընտրելու իրաւունքէն:**

**9 Դեկտեմբերի ընտրութիւնները 2015ին հաստատուած եւ խորհրդարանական կառավարման համակարգը նուիրականացնող նոր սահմանադրութեան քննութիւնը պիտի ըլլան: Մինչ 2017ի Ապրիլի ընտրութիւնները պէտք է ազդարարէին նոր ժամանակներու սկիզբը, նախկին վարչակարգը նենգ գործողութիւններով խափանեց քաղաքացիներու՝ ըստ իրենց նախասիրութեանց քուէարկելու ազատութիւնը: Այս ընտրութիւնները անջնջելի հետեւանք պիտի ունենան հայ ժողովուրդին եւ Հայաստանի համար:**

**Առաւել քան 128 տարիներ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը պայքարած է յանուն ընկերային արդարութեան, մարդկային իրաւունքներու եւ կամքի ազատ արտայայտութեան: Այս սկզբունքներէն մեկնելով է, որ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը ղեկավարած է ազգային ազատագրական պայքարը, որուն շնորհիւ ստեղծուեցաւ Հայաստանի անկախ Հանրապետութիւնը, որուն հիմնադրութեան դարադարձը նշուեցաւ հայրենիքի մէջ եւ Սփիւռքի տարածքին:**

**Վերոնշեալ սկզբունքներուն եւ զանոնք աշխարհի տարածքին յառաջ տանելու դարձ մը աւելի փորձառութեանց վրայ հիմնուելով է, որ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը Հայաստանի մէջ կը մասնակցի 9 Դեկտեմբերի ընտրութիւններուն:**




**Կուսակցութեան առաջադրած թեկնածուները հրապարակային կերպով յայտարարած են, որ անցեալի դասերու լոյսին տակ կը շարժին յառաջ՝ ստեղծելու համար այն ապագան, երբ Հայաստանի ժողովուրդը ոչ միայն իր ճակատագիրը պիտի կրնայ ինքնուրոյն որոշել, այլ նաեւ բարգաւաճ եւ արդար համակարգով օժտուած՝ հայրենիքի մէջ ապրելու իր իրաւունքը երաշխաւորուած պիտի տեսնէ:**

**Հայաստանն ու հայ ժողովուրդը կը դիմագրաւեն ճգնաժամային եւ գոյութենական մարտահրաւերներ: Արցախի ճակատի խախուտ խաղաղութիւնը ատրպէյճանական ռազմական մնայուն սպառնալիքին տակ կը գտնուի: Հայաստանի վրայ այլ պետութիւններու շրջանային մրցակցութեանց բերումով բանեցուած ճնշումները կը պարտադրեն մեր երկրին՝ վերարժեւորելու իր ներքին եւ արտաքին առաջնահերթութիւնները:**

**Այս մարտահրաւերները պէտք չէ խանգարեն, այլ ընդհակառակը՝ պէտք է խրախուսեն հայ քուէարկողը իր ազատ կամքը արտայայտելու Հայաստանի մէջ ժողովորդավարութիւնն ու օրէնքի գերակայութիւնը ամրապնդելու համար:**

**ՀՅԴ Արեւմտեան Միացեալ Նահանգներու կառոյցը կը հաւատայ, որ ՀՅԴի ծրագիրը եւ տեսլականը մեր հայրենիքը պիտի առաջնորդեն դէպի աւելի պայծառ ապագայ: Ապագայ մը, երբ հայ ժողովուրդի արդար ձգտումները պիտի իրականանան, երբ բոլոր քաղաքացիներուն մարդկային եւ քաղաքացիական իրաւունքները պաշտպանուած պիտի ըլլան, երբ տնտեսական եւ ընկերային արդարութիւնը պիտի իշխէ, եւ երբ Արցախը պիտի ըլլայ ուժեղ եւ բարգաւաճ:**





**Հ. Յ. Դ Ա Շ Ն Ա Կ Յ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

## **ՀՅԴ Աւստրալիոյ Կեդրոնական Կոմիտէ**

Հայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովի արտահերթ ընտրութիւնները տեղի պիտի ունենան 9 Դեկտեմբերին, որուն նախապատրաստական աշխատանքներուն սկսած են ձեռնարկել Հայաստանի քաղաքական բեմին վրայ գործող գլխաւոր ուժերը եւ այդ թուին ՀՅԴ Հայաստանի Գերագոյն Մարմինը, որ իր 22-րդ արտահերթ Գերագոյն ժողովով յայտնեց ընտրութիւններուն մասնակցելու մտադրութիւնը առանձին ցուցակով, հիմնական նպատակ դնելով հայրենիքի ծառայութեան իր առաքելութիւնը որ հիմնուած է իր նախընտրական ծրագրին մէջ, դրսեւորելով հաւատարմութիւն ազգային ուղեգիծին, ամբողջական պաշտպանութիւն Արցախի Հանրապետութեան ու անոր արդար իրաւունքներուն, ինչպէս նաեւ հայրենի բնակչութեան ընկերային ու տնտեսական արդարութեան պայքարին լրիւ իրականացում:

Մենք կը հաւատանք թէ «թաւշեայ յեղափոխութեան» յաջողութեամբ փակուեցաւ անցեալի այն տխուր էջը որ հիմնուած էր փտածութեան եւ մենաշնորհներու կայացման վրայ եւ կը յուսանք որ նորընտիր Ազգային ժողովը կը դառնայ խորհրդարանական համակարգի ժողովրդավարական այն ուժը, որ մէկ կողմէ կը հաստատէ երկրի օրէնքն ու արդարութիւնը, իսկ միւս կողմէ կը հակակշռէ գործադիր մարմնի գործունէութիւնները թերութիւններ արձանագրուելու պարագային:


Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը իր պատմութեան ընթացքին յաճախ գտնուած է հայրենիքին ու հայութեան սպառնացող վտանգներու եւ արտասովոր կացութիւններու դէմ հանդիման, բայց միշտ ալ իր մէջ գտած է այն ուժը, օգտուելով անցեալի սխալներէն, ինքնակազմակերպուելու, վերանորոգուելու եւ հայրենիքին ու հայութեան դրականօրէն ծառայելու դիրքին մէջ: Մեր այս ունեցած փորձառութիւնը վստահ ենք որ ՀՅԴ Հայաստանի Գերագոյն Մարմինը կրնայ ի սպաս դնել Հայաստանի ու Հայ ժողովուրդի վերելքին ու ամրապնդել «Նոր Հայաստան»-ի իրավիճակը ժողովրդավար հիմունքներով:

Առ այդ, նկատի ունենալով խորհրդարանական համակարգի ձեւավորումէն ետք տեղի ունենալիք ՀՀ Ազգային ժողովի ընտրութիւններուն կարեւորութիւնը, ՀՅԴ Աւստրալիոյ Կեդրոնական Կոմիտէն իր զօրակցութիւնը կը յայտնէ ՀՅԴ Հայաստանի Գերագոյն Մարմնին ու անոր կատարելիք աշխատանքներուն եւ իր ամբողջ ուժն ու



**Կարողականութիւնը ի սպաս կը դնէ որ այս ընտրութիւնները պսակուին յաջողութեամբ, միշտ հիմնական նպատակ ունենալով Հայաստանի ու հայութեան ամբողջական շահերը:**

**Միաժամանակ կոչ կ'ուղենք Հայաստանի քաղաքացիներուն, որ չմնան դիտողի դերին մէջ, այլ ուղղուին քուէատուփեր եւ ժողովրդավարութիւնը պահելու կամքով իրենց ձայները տան իրենց խիղճին համեմատ, իրենց միտքերուն մէջ ունենալով աւելի քան դար մը աննահանջ Հայ ժողովուրդի արդարութեան պայքարին լծուած եւ «հողին ու հային» հաւատարիմ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, որ յարատեւորէն կը գործէ հզօր հայրենիք կերտելու տեսլականի իրականացման ի խնդիր եւ միշտ պատրաստ է ծառայելու իր ժողովուրդին անկախ ընտրութեան արդիւնքներէն:**





**Հ. Յ. Դ Ա Շ Ն Ա Կ Յ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

## **Հ.Յ.Դ. Ռուսաստանի կազմակերպություն**

**Սիրելի հայրենակիցներ.**

Հայ Յեղափոխական Դաշակցության Ռուսաստանի կազմակերպությունը, իր ամբողջ կազմակերպական կառույցով սատարելով ՀՀ-ի Հայաստանի Գերագույն Սարմնին, կարևորում է դեկտեմբերի 9-ին կայանալիք Ազգային ժողովի ընտրությունները և հավատացած է, որ Հայաստանի և համայն հայության համար դրանք կլինեն շրջադարձային:

Այդ ընտրությունների արդյունքում ձևավորված Ազգային ժողովը պիտի որոշի Հայաստանի Հանրապետության զարգացման ռազմավարությունը, արտաքին և ներքին քաղաքականությունը, տնտեսության զարգացման ուղենիշերը: Նորընտիր Ազգային ժողովին է վերապահվելու նաև անվտանգության ապահովումն և Արցախի հարցով բանակցությունների վարումը: Նորընտիր Ազգային ժողովի որոշումներով է պայմանավորվելու Հայաստանի քաղաքացու կենսամակարդակն ու բարեկեցությունը:

Մենք վստահ ենք, որ Հայ Յեղափոխական Դաշակցության ազդեցիկ ներկայությունը խիստ կարևոր է Ազգային ժողովում՝ այդ բոլոր հարցերում ազգային և պետական շահի գերակայությունն ապահովելու համար: Ավելին, մենք վստահ ենք՝ որ առանց Դաշակցության ազդեցիկ ներկայության Ազգային ժողովն ու նրա կողմից ձևավորված գործադիր իշխանությունը ի զորու չեն լինի լուծել իրենց առջև դրված խնդիրներն ու հավուր պատշաճի դիմակայել առաջիկա մարտահրավերներին:

ՀՀ-ի ազդեցիկ ներկայությունն ԱԺ-ում անհրաժեշտ է, քանզի. Դաշակցությունը միակ ուժն է, որն ունի ոչ միայն հստակ ազգային գաղափարախոսություն, ուղեգիծ և ծրագիր, այլ նաև դրանք տարածելու, պաշտպանելու և իրագործելու փորձ ու կարողություն:

Դաշակցությունն առաջադրվածներից միակ ուժն է, որն ունի աշխարհասփյուռ կառույց և իր մարմիններով և ուղեկից կազմակերպություններով մեծապես կօժանդակի Հայաստանի արտաքին հարաբերությունների զարգացմանն ու շահերի պաշտպանությանը: Դաշակցությունը միակ ուժն է, որի համար հասարակության սոցիալական պաշտպանությունն ու սոցիալական արդարությունը ոչ թե լոզունգներ են,



այլ քաղաքական-կազմակերպական հավատամք:

-Դաշնակցության ներկայությունը խորհրդարանում կապահովի այլակարծությունն ու քննադատությունը, կապահովի ազգային և պետական շահի պաշտպանությունը:

-Դաշնակցության ազդեցիկ ներկայությունը խորհրդարանում թույլ չի տա, որ ընդունվեն այնպիսի օրենքներ, որոնք ուղղված են Հայաստանի և Արցախի անվտանգության, հայկական ավանդական ընտանիքի, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու, ազգային արժեքների և ավանդույթների դեմ:

-Դաշնակցությանն ընտրելով դուք կօգնեք, որ Հայ Դատի հանձնախմբերն ու գրասենյակներն ավելի ազդեցիկ լինեն աշխարհում, որ համահայկական մշակութային, բարեգործական և մարմնակրթական կազմակերպություններն ավելի արդյունավետ գործեն, որ հարյուրավոր կրթական հաստատություններ ավելի ամուր կապերով կապվեն Հայրենիքի հետ:

-Դաշնակցությանն ընտրելով՝ դուք կօգնեք որ հազարավոր աշխարհասփյուռ դաշնակցականներ և համակիրներ ավելի ուժեղ և գնահատված զգան իրենց և կխրախուսեք նրանց մասնակցությունը պետականաշինության գործին:

-Դաշնակցությանն ընտրելով՝ դուք կհաստատեք, որ երբեք ազգային արժեքների պաշտպանությունը չի անտեսվի, երբեք ազգայինը մեր մեջ չի նսեմանա, երբեք հայության պաշտպանը իր իսկ ժողովրդի կողմից չի անտեսվի:

-Դաշնակցությանն ընտրելով՝ դուք կընտրեք ինքներդ Ձեզ, քանզի Դաշնակցությունը մեկն է Ձեզանից և միշտ հավատարիմ է իր Հողին ու Հային...

Սիրելի ժողովուրդ, Դուք տեսնում և գիտակցում եք այն բոլոր մարտահրավերները, որոնք ծառայել են Հայաստանի առջև. ներքին և արտաքին վտանգները երբեք այդքան ազդու չեն եղել: Մեր սխալ որոշումը մեզ թանկ կարծենա, մենք չունենք այդ գինը վճարելու ոչ ռեսուրս, և ոչ էլ իրավունք: Դաշնակցությունն այսօր միասնական է ավելի, քան երբևէ: Մեր համար չկան դրսի և ներսի դաշնակցականներ, մենք ունենք մեկ օրակարգ՝ այն Հայի և Հայաստանի հավաքական շահերի պաշտպանությունն է:

Միացիր Դաշնակցությանը, և մենք միասին կհաղթենք նաև այս պայքարում:

Մենք վստահում և հավատում ենք Ձեզ...

## **Յ.Յ.Դ. Կեղրոնական Եւրոպայի Կոմիտէ**

Դեկտեմբեր 9-ին կայանալիք Հայաստանի Ազգային ժողովի Ընտրութիւնները անկիւնադարձային պիտի ըլլան Հայ ժողովուրդի կեանքին, հայրենի զոյգ պետութիւններու անվտանգութեան ու կայունութեան եւ առհասարակ աշխարհաքաղաքական ռազմավարութիւններ գործադրելու իմաստով:

Ընտրութիւններուն նախորդող ընտրական քարոզարշաւը սակայն, ըստ երեւոյթին այդքան ալ առողջ ու քաղաքակրթական ժամանակակից չափանիշներով չի ընթանար: Ամբոխավարութիւն յիշեցնող պայթիւնավտանգ յայտարարութիւնները, լոկ ուշադրութիւն եւ ընտրագանգուած գրաւելու մարմաջը, ինչպէս նաեւ ազգային անվտանգութեան նշանակութիւն ունեցող հաստատութիւններն ու արժէքները ընտրական ժամանակաւոր գործընթացներու ներգրաւելը անընդունելի եւ դատապարտելի են:

**Յ.Յ.Դ. Կեղրոնական Եւրոպայի Կոմիտէութիւնը, քաջ կը հաւատայ, որ հայ մարդու եւ հողին (պետութեան) անվտանգութիւնն ու արժանապատուութիւնը վերեն են ժամանակաւոր ընտրական գործընթացներէն եւ նոյնիսկ ընտրութիւններուն յաղթութիւն ապահովելիք իշխանութիւններէն, իսկ հաւատարմութիւնը հայ մարդուն եւ հողին՝ նուազագոյն պարտականութիւնը որեւէ կայացած եւ նպատակասլաց քաղաքական ուժի:**

Արդ, Յ.Յ.Դ. Կեղրոնական Եւրոպայի Կոմիտէն, զգաստութեան եւ խոհեմութեան կոչ կ'ուղղէ Հայաստանեան քաղաքական կեանքի բոլո՛ր ներկայացուցիչներուն առաւել չսրելու կացութիւնը, ինչպէս նաեւ զօրակցութիւն կը յայտնէ Յ.Յ.Դ. Հայաստանի կառոյցի ընտրարշաւին, ակնկալելով որ ընտրելու իրաւունք ունեցող քաղաքացիները կը ցուցաբերեն ազատ, անկաշկանդ, գիտակից ու խոհեմ ընտրութիւն, հեռու զգացական, յուզական ազդեցութիւններէ:



**Հ. Յ. Դ Ա Շ Ն Ա Կ Յ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

## **Յ.Յ.Դ. Իրաքի Կոմիտե**

Յաջորդ Կիրակի՝ տարւոյս Դեկ. 9-ին պիտի կայանայ Հայաստանի Ազգային ժողովի Արտահերթ Ընտրութիւնները, որը Հայրենիքի և Հայ ժողովուրդի ապագայի նկատմամբ կարելոր անկիւնադարձ պիտի հանդիսանայ:

Կարելորագոյնը Հայ ժողովուրդի, Արցախի և Հայաստանի պետութիւններու անվտանգութեան ու կայունութեան եւ ինչու չէ Սփիւռքի գոյութեան ու բարգաւաճման հարցերն են, քանզի առանց ապահով ու անվտանգ Հայրենիքի՝ եւս Սփիւռքը անապահով կ'ըլլայ ու կը տկարանայ: Նմանապէս խիստ կարելոր է ժողովուրդի տնտեսական և սոցեալական հարցերը:

Յ.Յ.Դ.-ան 128 տարիներու ընթացքին պահանջատերն ու պաշտպանն եղած է նման հարցերուն, յառաջացնելով համապատասխան քաղականութիւն ըլլայ այդ Հայրենիքին մէջ կամ Սփիւռք:

Հետեւելով «այսօրուայ» իշխանութեան ընտրական քարոզարշաւին, խիստ մտահոգութիւններ կառաջանայ մեր մօտ, աւելացնելով ոխերմութեան և սպառնալիքներու յայտարարութիւնները:

Յ.Յ.Դ. Իրաքի Կոմիտեն, հաւատացած է և կը զօրակցի Յ.Յ.Դ. Հայաստանի ԳՄ-ի որոշումին՝ մասնակցելու ընտրութիւններուն ամենալաւ թեկնածուներու ցուցակով և “Հաւատարիմ Հողին Ու Հայուն” նշանաբանով և կոչ կուղղէ Հայրենաբնակ Իրաքահայերուն աշխուժութեամբ մասնակցելու և քուէարկելու Կուսակցութեան ցանկի օգտին:

Կը մաղթենք մեր Կուսակցութեան ցանկի թեկնածուներուն ամենապայծառ յաջողութիւնները:

Անկախ ընտրութիւններու անդիւնքներէն՝ Յ.Յ.Դ.-ան կը մնայ միշտ հաւատարիմ պաշտպանն “Հողին Ու Հայուն”:



**Հ. Յ. Դ Ա Շ Ն Ա Կ Յ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

## **Հ.Յ.Դ. ՅուՆաստանի 82րդ Շրջանային Ժողով**

Հ.Յ.Դաշնակցութեան ՅուՆաստանի շրջանի 82րդ Շրջանային Ժողովը, որ գումարուեցաւ 1 եւ 2 Դեկտեմբեր 2018ին Աթենքի մէջ, սոյն յայտարարութեամբ կու գայ իր ամբողջական զօ-րակցութիւնը յայտնելու Հ.Յ.Դ. Հայաստանի մեր կազմակերպութեան, արտահերթ երեսփոխանական ընտրութիւններու մասնակցութեան առիթով:

2018ը նշանաւորուեցաւ անկիւնադարձային փոփոխութիւններով հայրենի քաղաքական կեանքին մէջ, հայ ժողովուրդին համար աւելի բարօր կեանքի եւ զարգացման երաշխիքներու սպասումներով Հայաստանի քաղաքական ուժերէն:

Հ.Յ.Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինը ընտրութեանց կը մասնակցի ճակատագրական ժամանակներ ապրելու խոր գիտակցութեամբ: Հաւատարիմ Հ.Յ.Դ. սկզբունքներուն, Դաշ-նակցութեան հայրենի մեր կազմակերպութիւնը վայելելով կազմակերպական մեր կառոյցի ամբողջական զօրակցութիւնը, կը ձգտի հայ ժողովուրդի քաղաքական, ընկերային եւ տնտեսական վերելքին համար, որ կ'արտացոլայ իր նախընտրական ծրագրին մէջ, ազգային եւ ընկերային առաջադրանքներով, Հայաստանի ու Արցախի ամողջականութեան պահ-պանման գերագոյն յանձնառութեամբ:

Վստահ ենք, որ հայրենի մեր ժողովուրդը անգամ մը եւս վերանորոգ ակնկալիքներով իր վստահութիւնը պիտի ցուցաբերէ Հ.Յ.Դաշնակցութեան հայրենիքի զարգացման համար ծրագիրներուն, տալով Դաշնակցութեան հնարաւորութիւնը դարձեալ կարելոր եւ որոշիչ դերակատարութիւն վերցնելու նոր կազմուելիք խորհրդարանէն ներս: Արդէն իսկ, խորհրդ-դարանական կառավարման նոր գործելածելը, որուն կիրարկման համար մեծ եւ գլխաւոր ներդրում ունեցաւ մեր կուսակցութիւնը, կոչուած է արդիականացնելու հայրենի քաղաք-կան կեանքը՝ ժողովուրդ եւ պետութիւն կապերուն տալով նոր որակ, միաժամանակ երաշ-խիքը դառնալու, որպէսզի հայրենի ժողովուրդը ազատ եւ անկաշկանդ կերպով ապրի եւ ստեղծագործէ իր սեփական հողին վրայ:

Կոչ կ'ուղղենք հայրենիքի մէջ ապրող մեր հայրենակիցներուն մասնակից դառնալու

**Դեկտեմբեր 9ի ընտրությանց եւ իրենց քուէով վստահութիւն յայտնելու «հողին ու հային»  
հաւատարիմ Յ.Յ.Դաշնակցութեան, ի խնդիր հզօր Հայաստանի մը կերտման եւ մեր  
ժողովուրդի բոլոր տեսլականերու իրականացման:**





## ՀՀԴ Լոճտոճի Կոճիտէ

Սիրելի Հայրենակիցներ՝  
Ահա կը ճոտենայ Դեկտեմբերի 9:  
Օր՝ ուր տեղի պիտի ունենայ մեր հայրենիքի Ազգային Ժողովի ճոր ղնտրութիւնները:

Խիստ կարելոր կը գտնենք ՀՀԴ-ի ներկայութիւնը խորհրդարանական այդ ժողովին: Ժողով որը պիտի ճշտէ ապագայի քաղաքականութիւնը հանդէպ Արցախի եւ Հայրենիքի անվտանգութեան, պիտի ճշտէ ռազմավարութիւնը Հայաստանի բնակչութեան ղնկերային – տնտեսական արդար ու կայուն զարգացումը:

Այսօր ՀՀԴ -ն միակ ուժն է որ՝ հաւատարիմ իր 128 ամեայ պատմութեան ու փորձառութեան, հիմնուելով Հայրենիքի ու սփիւռքի կուսակցական իր լայն զանգուածներուն ու իր որդեգրած զորեղ հաւատքին վրայ կերտելու Ազատ, Անկախ ու Միացեալ Հայաստան, կը կարողանայ իրականացնել այն Հայաստանը որը մեր դապաւոր երազանքի մեկնակետն է: Հայաստան հիմնուած ժողովրդավար սկզբունքներու, մարդու իրաւունքի, կամքի ազատ արտայայտութեան եւ ղնկերային արդարութեան վրայ:

Ուստի՝ նկատի ունենալով ղնտրութիւններուն մասնակցող զանազան կուսակցութիւններու ու դաշինքներու ներկայացուցած ծրագիրները կը յայտնենք Լոճտոճի մեր կազմակերպութեան լիարժէք զօրակցութիւնը ՀՀԴ Հայաստանի Գերագոյն Մարմինի յայտարարած կարգախօսին «Յանուն Հողին ու Հայրենիքին», անոր որդեգրած ծրագիրներուն ու կատարելիք աշխատանքներուն:

Այս առթիւ Կոճիտութիւնս կոչ կ'ուղէ Հայրենի մեր սիրասուն ժողովուրդին ջանք չխնայել Դեկտեմբերի 9-ին ներկայանալու քուէարկութեան կեդրոնները ու կատարել ղնտրութիւնը խղճի ու արդարութեան հիմունքներով:



ՀՅԴ Հանրային կապերի  
գրասենյակ  
2018